

## Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱԲԵՂԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(ավազանի անունը՝ Հարություն)

Ծնվել է 1975 թ. Երևան քաղաքում:

1982-1990 թթ. սովորել է տեղի № 164 միջնակարգ դպրոցում:

1990-1997 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1996 թ. դեկտեմբերի 26-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

1997-1998 թթ. ծառայել է Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանում իբրև քարտուղար:

1998 թ. հուլիսի 30-ին պաշտպանել է «Հանս Քյունգի էկյումենիկ աստվածաբանության տեսությունը» թեմայով ավարտաճառ՝ արժանանալով «լավ» գնահատականի:

1998-1999 թթ. երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պնօրհնությամբ ուսումը շարունակել է Բոսսեի էկումենիկ համալսարանում (Շվեյցարիա):

1998 թ. Բոսսեի համալսարանում պաշտպանել է թեզ «Աստվածաշնչի էկումենիկ մեկնաբանությունը» թեմայով՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1999 թ. վերադարձել է Մայր Աթոռ և ծառայել Կաթողիկոսարանում իբրև քարտուղար: Այնուհետև Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Բեկչյանի հրավերով բարձրագույն ուսման է մեկնել Այխշթեթի աստվածաբանական համալսարան (Գերմանիա):

2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: